

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱՅՔՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորվում են «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) առցանց եղանակով՝ Կայքէջի միջոցով, վարկ ստանալու կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

2. Սահմանումներ

Հաճախորդ՝ Բանկի առցանց վարկավորման ծառայությունից օգտվող կամ այդ ծառայությունից օգտվել ցանկացող ցանկացած ֆիզիկական անձ

Օգտագործող՝ Բանկի Կայքէջի Անձնական տիրույթում գրանցված Հաճախորդ

Համակարգ՝ ծրագրային համակարգ, որը թույլ է տալիս առցանց եղանակով կապ հաստատել Բանկի հետ՝ Անձնական տիրույթում գրանցվելու միջոցով Վարկ ստանալու համար

Կայքէջ՝ Բանկի www.conversebank.am ինտերնետային պաշտոնական կայքէջ

Անձնական տիրույթ՝ համացանցի միջոցով վարկային ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռող ծրագրային Համակարգի ներքո՝ Հաճախորդի անունով Կայքէջում ստեղծվող՝ անձնական տիրույթ, որի օգնությամբ Օգտագործողի կողմից Բանկին Հայտ է ներկայացվում՝ առցանց եղանակով Բանկի վարկավորման ծառայությունից օգտվելու նպատակով գործառույթներ իրականացնելու համար

Գաղտնաբառ՝ Պայմանների և/կամ Բանկի կողմից հրապարակված նվազագույն պահանջներին բավարարող Օգտագործողի կողմից ստեղծվող և մուտքագրվող գաղտնաբառ, որը հասանելի է միայն Օգտագործողին

Վարկային հայտ կամ Հայտ՝ Անձնական տիրույթում Բանկին ներկայացվող փաստաթուղթ, որի ստորագրման միջոցով Օգտագործողը դիմում է առցանց եղանակով Վարկ ստանալու համար

Վարկ՝ Բանկի կողմից հրապարակված պայմաններին համապատասխան ֆինանսավորում, որը տրվում է առցանց եղանակով Հայտ ներկայացրած Հաճախորդներին

Օգտագործողի Բջջային հեռախոսահամար կամ Բջջային հեռախոսահամար՝ տվյալ Օգտագործողի մշտապես օգտագործման ներքո գտնվող բջջային հեռախոսահամար, որը սահմանափակ չէ օգտագործման մեջ, որի միջոցով տեղի է ունենում Բանկի և Հաճախորդի հաղորդակցումը

Մեկանգամյա կոդ՝ Օգտագործողի Բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրության միջոցով ուղարկվող կոդ, որի մուտքագրումը հանդիսանում է Անձնական տիրույթում գրանցման նախապայման

Անձնական տվյալներ՝ Հաճախորդի անձնական տվյալներ, որոնք Հաճախորդի կողմից տրամադրվում են Բանկին և օգտագործվում են Հաճախորդին նույնականացնելու համար

ՀԾՀ՝ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտի համար).

3. Անձնական տիրույթի ստեղծում և օգտագործում

3.1. Բանկի և Հաճախորդի միջև վարկավորման շրջանակներում հաղորդակցումն իրականացվում է Անձնական տիրույթի միջոցով: Այն մասնավորապես հնարավորություն է տալիս հեռահար եղանակով ծանոթանալ Բանկի վարկավորման ընդհանուր և անհատական պայմաններին, Բանկ ներկայացնել Վարկ ստանալու Հայտ, ստանալ Վարկի ստացման համար անհրաժեշտ տեղեկություններ, այդ թվում՝ ստանալ Բանկի որոշումը Վարկ տրամադրելու կամ մերժելու, Վարկային հայտի հետագա կարգավիճակի վերաբերյալ, ինչպես նաև Վարկի հաստատման դեպքում առցանց կնքել վարկային պայմանագիր:

3.2. Անձնական տիրույթ ստեղծելու համար անհրաժեշտ է Կայքէջում գրանցվել որպես Օգտագործող՝ լրացնելով գրանցվող Օգտագործողի Անձնական տվյալները (անուն/ազգանուն, ՀԾՀ/, Բջջային հեռախոսահամար) և ստեղծել տվյալների լրացման ժամանակ ներկայացվող՝ Բանկի կողմից սահմանված նվազագույն անվտանգության պայմաններին բավարարող Գաղտնաբառ: Հաճախորդը, լրացնելով Հայտը, համաձայնություն է տալիս իր Անձնական տվյալները (պարտադիր լրացման ենթակա) օգտագործելու Հաճախորդի հետ կնքվող պայմանագրերում, վերջինիս հետ հաղորդակցման, տեղեկությունների փոխանակման ժամանակ, ինչպես նաև Բանկի կողմից Հաճախորդին ուղարկվող տեղեկատվական նյութերում: Բանկը պարտավորվում է Հաճախորդի անձնական տվյալները մշակել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

3.3. Անձնական տիրույթում գրանցվելու համար Օգտագործողին անհրաժեշտ է Համակարգում լրացնել Օգտագործողի բջջային հեռախոսահամարը և գաղտնաբառը: Այնուհետև Օգտագործողի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվում է SMS հաղորդագրություն, որում նշված Մեկանգամյա կոդն Օգտագործողը պետք է մուտքագրի համապատասխան դաշտում: Անձնական տիրույթում Օգտագործողը կարող է ցանկացած ժամանակ փոփոխել իր գաղտնաբառը:

3.4. Անձնական տիրույթում մուտքագրված տվյալները կարող են ցանկացած ժամանակ փոփոխվել Օգտագործողի կողմից: Փոփոխման ենթակա չէ ՀԾՀ-ն:

3.5. Օգտագործողն իր Անձնական էջում չի կարող կատարել պարտադիր համարվող տվյալների հեռացում կամ օրինակելի ձև հանդիսացող փաստաթղթերում փոփոխությունների կատարում, եթե դրանք չեն հանդիսանում փաստաթղթերի լրացման գործողություններ:

3.6. Անձնական տիրույթում «Համաձայն եմ», «Ընդունում եմ», «Հաստատում եմ» և/կամ համաձայնություն արտահայտող այլ կոճակների նշումով Օգտագործողը հավաստում է, որ համաձայն է և մտադիր է էլեկտրոնային եղանակով Բանկից Վարկ ստանալ անկանխիկ եղանակով, ինչպես նաև վերոնշյալ գործարք/ներ/ի շրջանակներում իր՝ Բանկում առկա

հաշիվներին վարկային միջոցներ ստանալ, ինչպես նաև այդ հաշիվներից անկանխիկ վճարումներ կատարել:

3.7. Նման գործողությունները և գրառումները կարող են պարունակել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

3.7.1. «Ընդունել և ստորագրել» կամ նմանատիպ այլ կոճակների սեղմում, համապատասխան դաշտերում «V» նշանի մուտքագրում, որոնք նշանակում են, որ Դուք կարդացել, ծանոթացել, համաձայնվել, ընդունել, ստորագրել եք համապատասխան պայմանագրերը, պայմանները, համաձայնությունները, տեղեկանքները, այլ փաստաթղթերն ու տեքստերը, և պարտավորվում եք պատշաճ և ժամանակին կատարել դրանցով նախատեսված պայմանները և պահանջները.

3.7.2. Ձեր Անձնական տիրույթում այլ գործողությունների և գրառումների կատարում, որոնք առաջացնում են համապատասխան գործողության կամ գրառման կատարմամբ ենթադրվող հետևանքներ.

3.7.3. «Մուտքագրել կողը» դաշտում համապատասխան կողի մուտքագրում:

3.8. Օգտագործողն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Անձնական տիրույթում մուտքագրված տվյալների իսկության, ամբողջականության, արժանահավատության, թերի ներկայացման, կատարված տպագրական,այլ սխալների համար, ինչպես նաև անվտանգության և այլ կանոնների չպահպանման և դրանցից բխող հետևանքների համար և հավաստում է, որ Անձնական տիրույթում ներկայացված տվյալները կարող են հիմնավորվել փաստաթղթերով, եթե այդ մասին Բանկը պահանջ ներկայացնի: Օգտագործողի Անձնական տիրույթում կատարվող գործողությունները Բանկի կողմից դիտարկվելու են որպես Օգտագործողի կամքի ուղղակի և իրական արտահայտում:

3.9. Օգտագործողը սույնով տալիս է Հայտում լրացված էլ. հասցեին և Բջջային հեռախոսահամարին Բանկի տեղեկատվական, գովազդային նյութերի և ծանուցումների ստացման իր համաձայնությունը:

3.10. Օգտագործողը համաձայնում և պարտավորվում է պահպանել Անձնական տիրույթ մուտք գործելու համար անհրաժեշտ տեղեկությունների գաղտնիությունը, չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հայտնի/հասանելի չդարձնել իր Անձնական տիրույթի բացման և շահագործման համար օգտագործվող գաղտնաբառերը, կոդերը և այլ տվյալները, կամ կատարել գործողություններ, որոնք կարող են հանգեցնել այդպիսի տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալուն:

3.11. Իր իսկ անվտանգությունից ելնելով՝ Օգտագործողը հայտնում է իր պատրաստակամությունը Բանկին անհապաղ հայտնել համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից իր Անձնական տիրույթ մուտք գործելու կամ նման փորձի մասին և/կամ իր Անձնական տիրույթի միջոցով համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից գործարք կատարելու կամ նման փորձի մասին:

3.12. Օգտագործողը պարտավորվում է հատուցել Բանկի բոլոր այն ծախսերը, և վնասները, որոնք առաջացել են Օգտագործողի կողմից Պայմանների չպահպանման, պայմանագրային

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ Բանկի կողմից իր Անձնական տիրույթի միջոցով Օգտագործողից ստացված ցանկացած հանձնարարականի կատարման արդյունքում:

3.13. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Օգտագործողի Անձնական տիրույթից ստացված տվյալների, հանձնարարականների կամ անձնական տիրույթի միջոցով իրականացված այլ գործողությունների կամ անգործության համար, անգամ եթե ապացուցվի, որ այդ գործողությունները կատարվել են Օգտագործողի Անձնական տիրույթ մուտք գործելու և գործողություններ իրականացնելու իրավասություն չունեցող անձանց կողմից: Ցանկացած դեպքում, Օգտագործողը անձամբ Բանկի առջև պատասխանատու է իր Անձնական տիրույթի միջոցով կատարված ցանկացած գործողության համար: Բանկը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի կողմից ներկայացված տեղեկատվության անճշտության, թերի ներկայացման և/կամ Պայմանների անվտանգության կանոնների չպահպանման հետևանքով Օգտագործողի վնասների համար:

3.14. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Անձնական տիրույթի միջոցով Օգտագործողին մատուցվող ծառայությունների տեսակները և/կամ դրանց մատուցման, այդ թվում՝ Օգտագործողին նույնականացնող պայմանները և/կամ կարգը կամ դադարեցնել մատուցվող ծառայությունները՝ «՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցելով Օգտագործողին անձամբ, Անձնական տիրույթում և/կամ Կայքէջում այդ մասին տեղեկատվություն հրապարակելու միջոցով:

3.15. Բանկը կարող է սեփական նախաձեռնությամբ ժամանակավորապես, ամբողջովին կամ մասամբ դադարեցնել Անձնական տիրույթի միջոցով ծառայությունների մատուցումը՝ համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնելու կամ վերջինիս անվտանգությունը, հուսալիությունը և անխափան աշխատանքն ապահովելու նկատառումներով, Բանկը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի վերջնական սարքավորման կամ էլեկտրոնային հաղորդակցման ցանցի խափանման կամ ընդհատման, կամ երրորդ անձանց չարտոնված մուտքի արդյունքում Օգտագործողին պատճառված վնասների համար, ուստի, Օգտագործողը պետք է ինքնուրույն իրականացնի իր լրկալ ցանցի (Բանկի հետ սահմանազատման կետից հետո գտնվող) աշխատունակության ապահովումը և ցանցային սարքավորումների պաշտպանությունը:

3.16. Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Անձնական տիրույթի օգտագործումը սույն Պայմանների խախտմամբ այն օգտագործվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Բանկը հիմքեր ունի ենթադրելու, որ Անձնական տիրույթն օգտագործվում է երրորդ անձանց կողմից, կամ Համակարգի անվտանգության ապահովման նկատառումներով, որի մասին Հաճախորդը ծանուցվում է:

3.17. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և «՝ օրենսդրությամբ նախատեսված այլ նկատառումներից ելնելով՝ Բանկն իրավասու է չկատարել կամ կասեցնել Անձնական տիրույթի միջոցով ներկայացված հանձնարարականների կատարումը, որոնց վավերականությունը և/կամ օրինականությունն

ակնհայտ չէ, լրացուցիչ տեղեկատվություն, փաստաթուղթ/եր/ պահանջել կամ կիրառել Անձնական տիրույթի օգտագործման հանդեպ այլ սահմանափակումներ:

3.18. Բանկն իրավունք ունի Անձնական տիրույթում կատարել իր կողմից մատուցվող ծառայությունների տեսակների ավելացում, դադարեցում, պայմանների փոփոխում և այլ՝ առցանց ծառայությունների մատուցման հետ կապված անհրաժեշտ գործողություններ:

3.19. Պայմանների 3.15-ից 3.18 կետերով Բանկին վերապահված իրավունքները հայեցողական լիազորություններ են և Բանկն ինքնուրույն է որոշում կայացնում այդ իրավունքներից օգտվելու կամ չօգտվելու մասին, որի համար Օգտագործողը հետագայում Բանկին չի կարող պահանջ/ներ/ ներկայացնել:

4. Վարկային հայտի ներկայացում և վարկային պայմանագրի կնքում

4.1. Վարկային հայտ կարող են ներկայացնել 18 -ից 65 տարեկան՝ Բանկի հաճախորդ¹ և ՀՀ ռեզիդենտ² հանդիսացող ֆիզիկական անձինք: Հայտը Բանկ ուղարկելուց հետո մի քանի րոպեի ընթացքում (Բանկից անկախ պատճառներով կապի խափանման կամ այլ տեխնիկական խնդիրների բացակայության դեպքում) Անձնական տիրույթում Հաճախորդը Բանկից ստանում է Հայտի հաստատման մասին վկայող հաղորդագրություն, որը պարունակում է առաջարկվող վարկի գումարի առավելագույն չափը, կամ հայտի մերժման հաղորդագրություն, կամ լրացված տվյալների ստուգում և ճշգրտում/խմբագրում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկացնող հաղորդագրություն: Սույն կետում սահմանված Բանկից հաղորդագրություն ստանալու ժամկետը կարող է երկարաձգվել Հաճախորդի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված:

4.2. Վարկի հաստատման դեպքում Հաճախորդը պետք է ծանոթանա վարկի տրամադրման պայմաններին և եղանակին և, համաձայնվելու դեպքում ընդունի դրանք՝ ստորագրելով վարկային պայմանագիրը:

4.3. Կախված Հաճախորդի՝ վարկի համար դիմելու պահին Բանկում առկա անձնական տվյալներից. որպես վարկի ստացման եղանակ Բանկի կողմից կարող է առաջարկվել վարկը ստանալ Բանկի գլխավոր գրասենյակից կամ ցանկացած մասնաճյուղից (այսուհետ՝ Մասնաճյուղ):

4.4. Պայմանների 4.3 կետով սահմանված դեպքում, եթե Հաճախորդը համաձայնվում է վարկը ստանալ Մասնաճյուղից, ապա հաստատված պայմաններով վարկը հասանելի է Մասնաճյուղում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, այլապես Հայտի մասին որոշումն ուժը կորցրած է ճանաչվում: Եթե վերոնշյալ ժամկետում ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու մարմինների որոշմամբ Հաճախորդի հաշվի (հաշիվների) կամ այլ գույքի կամ Հաճախորդի պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող գույքի կամ

¹ Բանկի հետ Բանկային ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձ

² Համաձայն Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենքի

հաշիվների վրա արգելանքի կիրառում, կամ Հաճախորդի՝ վարկի գումարի ստացման պահին վարկային պատմության, ներառյալ՝ ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորությունների առկայության, այլ հանգամանքների այնպիսի փոփոխություն, որի պարագայում վարկի տրամադրումը դառնում է Բանկի գործող պայմաններին չհամապատասխանող, կամ Հաճախորդի սնանկության/լուծարման վերաբերյալ կամ Հաճախորդից պարտքի բռնագանձման վերաբերյալ դատարան հայցադիմում առկայություն, կամ այնպիսի հանգամանքների առկայություն, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկը սահմանված ժամկետներում չի վերադարձվի և Հաճախորդն ի վիճակի չի լինի կատարելու իր կողմից ստանձնած պարտավորությունները, կամ Վարկառուն կամ նրա հետ փոխկապակցված անձինք ներգրավված են ապօրինի գործունեության մեջ, ապա Բանկն իրավունք ունի Հաճախորդի վարկի գումարի ստացումը կամ ստացման ձևակերպումը մերժել, որի դեպքում Վարկային պայմանագիրը համարվում է ուժը կորցրած:

4.5. Վարկավորման պայմանների ընդունումը և ստորագրումն իրականացվում է Անձնական տիրույթի միջոցով՝ էլեկտրոնային հավաստմամբ, որը համարժեք է ձեռագիր ստորագրությանը և որով կողմերի միջև առաջանում են սույն պայմաններով և կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված իրավունքներ ու պարտավորություններ: Վարկային պայմանագրի ստորագրում է համարվում Հաճախորդի կողմից «Համաձայն եմ պայմաններին», «Հաստատում եմ» կամ այլ՝ համանման բառակազմով կոճակի օգնությամբ առցանց կատարված նշումը, որի առկայության դեպքում Վարկային պայմանագիրը համարվում է երկկողմանի ստորագրված և ուժի մեջ մտած:

5. Օգտագործողի նույնականացումը

5.1. Հաճախորդին պատշաճ Նույնականացման համար Օգտագործողից պահանջվող տեղեկատվության ձևը կախված է ծառայությունից օգտվելու համար դիմելու պահին տվյալ Օգտագործողի մասին Բանկում առկա, ինչպես նաև տեղեկատվական այլ աղբյուրներից հասանելի տվյալների առկայությունից, վավերականությունից և արդիականությունից: Այսպես.

- եթե Օգտագործողը հանդիսանում է Բանկի գործող Հաճախորդ և վերջինիս կողմից լրացված՝ Պայմանների 3.2 կետով սահմանված տեղեկատվությունը և Օգտագործողի կողմից լրացված անձը հաստատող փաստաթղթի տվյալները վավեր են և բոլորը միաժամանակ կամ մասնակիորեն համընկնում են Բանկում առկա տվյալների կամ տեղեկատվական այլ աղբյուրներից հասանելի վավեր տվյալների հետ, ապա Օգտագործողի բջջային հեռախոսահամարին SMS-հաղորդագրությամբ նախապես ուղարկված Մեկանգամյա օգտագործման կոդի մուտքագրման դեպքում Օգտագործողը համարվում է նույնականացված
- եթե Օգտագործողը հանդիսանում է Բանկի գործող Հաճախորդ, և վերջինիս կողմից լրացված՝ Պայմանների 3.2 կետով սահմանված տեղեկատվությունը և Օգտագործողի կողմից լրացված անձը հաստատող փաստաթղթի տվյալները չեն

համընկնում Բանկում առկա վավեր տվյալների հետ, ապա Օգտագործողից պահանջվում է լրացնել լրացուցիչ Անձնական տվյալներ, և, Օգտագործողի բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրությամբ նախապես ուղարկված մեկանգամյա օգտագործման կոդի մուտքագրման դեպքում Օգտագործողը ենթակա է առերես նույնականացման՝ Բանկի Մասնաճյուղ անձամբ այցելելու միջոցով:

5.2. Անձնական տիրույթում, այդ թվում՝ գրանցման ժամանակ, Օգտագործողը չի կարող հանդես գալ լիազորված անձի միջոցով, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ:

6. Մասնաճյուղ այցելելու միջոցով վարկի ստացում

6.1. Մասնաճյուղից վարկի ստացման եղանակը Օգտագործողին առաջարկվում է հետևյալ դեպքերում.

- եթե Բանկում առկա չէ Օգտագործողի անունով՝ գործող խնայողական և/կամ քարտային հաշիվ, կամ ստացվող վարկի արժույթով գործող խնայողական և/կամ քարտային հաշիվ
- եթե Օգտագործողի կողմից իր Անձնական տիրույթի օգնությամբ ներկայացված և/կամ Բանկի համար տվյալ Օգտագործողի մասին հասանելի տեղեկատվությունը բավարար չէ վարկավորման վերաբերյալ որոշում կայացնելու համար.
- սույն Պայմանների և կանոնների 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերում
- Պայմաններով սահմանված այլ դեպքերում:

6.2. Մասնաճյուղ այցելելու միջոցով վարկի ստացման համար Հաճախորդը պետք է նույնականացվի որպես այն Օգտագործող, որն իր Անձնական տիրույթից վարկային հայտ է ներկայացրել Բանկին, ծանոթացել վարկի տրամադրման պայմաններին և եղանակին և, համաձայնվել և ընդունել դրանք՝ ստորագրելով վարկային պայմանագիր: Նույնականացվելու համար անհրաժեշտ է Մասնաճյուղ ներկայացնել այն վավեր անձը հաստատող փաստաթուղթը, որը լրացվել է Օգտագործողի Անձնական տիրույթում վարկային հայտ ներկայացնելիս, և/կամ առկա է եղել Բանկի համար հասանելի տեղեկատվական բազաներում:

7. Այլ պայմաններ

7.1. Վարկավորումը կատարվում է առցանց միջավայրում, ուստի Կայքէջ և Անձնական տիրույթ մուտք գործելու, գրանցվելու և այլ գործողություններ կատարելու համար Օգտագործողը պետք է նշված գործողությունների կատարման ընթացքում մշտական հասանելիություն ունենա համացանցին:

7.2. Բանկի կողմից Օգտագործողի Անձնական տիրույթի վրա կարող է տեղադրվել Բանկի կամ վերջինիս հետ համագործակցող կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ օբյեկտներ: Բոլոր այդ

օբյեկտները պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ և դրանց ապօրինի օգտագործումը կարող է հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետևանքների:

7.3. Հաճախորդին Անձնական տիրույթում Բանկի կողմից ուղարկվող հաղորդագրությունները, ծանուցումներն ու գրությունները համարվում են Բանկի կողմից պատշաճ ուղարկված դրանք՝ Օգտագործողին հասանելի դարձնելու պահից՝ անկախ այն հանգամանքից, թե Օգտագործողը փաստացի երբ է դրանց հետ ծանոթացել: Բանկի կողմից Օգտագործողի բջջային հեռախոսահամարին ներկայացվող SMS հաղորդագրության՝ Օգտագործողի կողմից չստացման կամ այլ անձի կողմից ստացման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

7.4. Համակարգն աշխատում է շուրջօրյա: Համակարգում տեխնիկական խափանումների դեպքում Բանկը դրանք կարգավորում է հնարավոր սեղմ ժամկետներում:

7.5. Անհաղթահարելի ուժի և/կամ պետական մարմինների գործողությունների կամ այլ՝ Բանկից անկախ պատճառներով առաջացած ընդհատումների և խափանումների դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի հնարավոր վնասների համար:

7.6. Օգտագործողը համաձայնվում է փոխհատուցել Բանկի կողմից կրած վնասները, եթե իր Անձնական տիրույթն օգտագործել է ոչ պատշաճ կամ սույն Պայմանների խախտմամբ:

7.7. Սույն Պայմաններին համաձայնություն տալը կամ Անձնական տիրույթում գրանցվելը Բանկի համար չի առաջացնում վարկ տրամադրելու կամ այլ ծառայություն մատուցելու պարտավորություն:

7.8. Բանկն իրավասու է փոփոխել Պայմանները: Պայմանների փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից Օգտագործողին Կայքէջի օգնությամբ ծանուցում ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե Օգտագործողը համաձայն չէ փոփոխությունների հետ, ապա Օգտագործողի գրանցումը ինքնաբերաբար համարվում է դադարեցված, իսկ Բանկի հանդեպ պարտավորությունները գործում են մինչև դրանց պատշաճ և ամբողջական կատարումը: Օգտագործողի գրացման դադարեցման ժամանակ Օգտագործողի Անձնական տիրույթում առկա Օգտագործողի փաստաթղթերն (Վարկային պայմանագիրը, անհատական թերթիկը) ուղարկվում են Օգտագործողի էլեկտրոնային հասցեին: